ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

18 հունիսի 2010թ. N- Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՐՄԵՆԻԱ ՋԵՍՏԻՈՆԵ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի կանոնները, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 18-րդ կետի և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշման ծրագրի 36-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները, հաշվի առնելով «Ռենկո Արմէստեյտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Արմենիա Ջեստիոնե» փակ բաժնետիրական ընկերության առաջարկը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևանի սեփականությունը համարվող Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին (այսուհետ՝ գույք) հանձնել «Արմենիա Ջեստիոնե» փակ բաժնետիրական ընկերության վարձակալությանը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին.

1) «Արմենիա Ջեստիոնե» ընկերության հետ կնքել գույքի վարձակալության պայմանագիր՝ դրանում նախատեսելով հետևյալ հիմնական պայմանները.

ա. գույքը հանձնվում է վարձակալության 20 տարի ժամկետով,

բ. գույքը հանձնվում է վարձակալության վարձակալված գույքն օգտագործելու արդյունքում ստացված զուտ շահույթի (հավաքարգված միջոցների և կատարված ծախսերի տարբերություն) 50% բաժինը որպես վարձավճար Երևան համայնքին վճարելու պայմանով,

գ. վարձակալը պարտավոր է ավտոկայանատեղի համար վճարի չափը (չափերը) նախապես համաձայնեցնել Երևանի քաղաքապետի հետ: Վճարի չափը (չափերը) կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

2) իրականացնել սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետից բխող այլ գործառույթներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<<<ԱՐՄԵՆԻԱ ՋԵՍՏԻՈՆԵ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 28.08.2008թ. N 955-Ա, Երևանի քաղաքապետի 29.08.2008թ. N 3876-Ա որոշումների հիման վրա Երևանի քաղաքապետարանի և <<Ռենկո>> ընկերության միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ <<Ռենկո>> ընկերության կողմից իրականացվում է նեդրումային ծրագիր, որի արդյունքում Երևանի Ազատության հրապարակում վերջինիս կողմից կառուցվել է ստորգետնյա ավտոկայանատեղի:

Ավտոկայանատեղի շինարարական աշխատանքներն արդյունավետ ավարտելուց և այն Երևանի քաղաքապետարանին հանձնելուց հետո Երևանի քաղաքապետարան է դիմել <<Ռենկո Արմէստեյտ>> ՍՊԸ-ն և հայտնել, որ ՌԵՆԿՈ ՀՈԼԴԻՆԳԻ կողմից մշակվել է ավտոկայանատեղի կառավարման վերաբերյալ համապատասխան գործարար ծրագիր: Այդ նպատակով իրենք հիմնադրել են տեղական առևտրային կազմակերպություն՝ Արմենիա Ջեստիոնե>> ՓԲԸ-ն ժամանակակից կորպորատիվ կառավարման համակարգով, որը պետք է տրամադրի բարձրակարգ ծառայություններ Երևան քաղաքում:

Նշված ընկերությունների կողմից առաջարկվել է ավտոկայանատեղի համար վճարի չափը սահմանել հետևյալ դրույքաչափերով.

Յուրաքանչյուր 1 ժամվա կամ մասնակի ժամի համար	200 ՀՀ դրամ, ընդ որում առաջին ժամից հետո 2-րդ ժամվա հաշվարկը սկսվում է 10 րոպե անց
1 ամսվա վճար (08:00-20:00 կանգնելու ժամերով)	23.000 ՀՀ դրամ
1 ամսվա վճար (19:00-09:00 կանգնելու ժամերով)	16.000 ՀՀ դրամ
1 ամսվա վճար շուրջօրյա	30.000 ՀՀ դրամ
1 տարվա վճար (08:00-20:00 կանգնելու ժամերով)	230.000 ՀՀ դրամ
1 տարվա վճար (19:00-09:00 կանգնելու ժամերով)	160.000 ՀՀ դրամ
1 տարվա վճար շուրջօրյա	300.000 ՀՀ դրամ

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով <<Ռենկո>> ընկերության արդյունավետ գործունեությունը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԱՐՄԵՆԻԱ ՋԵՍՏԻՈՆԵ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<<<Արմենիա Ջեստիոնե>> փակ բաժնետիրական ընկերության վարձակալությանը գույք հանձնելու մասին>> որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ